



ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարություն



Աուդիո Վիզուալ
լրագրողների ասոցիացիա
Հասարակական կազմակերպություն
Non Government Organization
Association of
Audio Visual reporters



«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ

«Հայաստանի Հանրապետության 2015թ.-ի երիտասարդական
մայրաքաղաք՝ Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ
թրաֆիքինգի-Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի»
մշտադիտարկում ծրագիր

ԶԵԿՈՒՅՑ

Ստեփանավան-2015



**ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարություն**

«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ

**«Հայաստանի Հանրապետության 2015թ.-ի երիտասարդական մայրաքաղաք՝
Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի-Գիտելիքների մրցարշավ
ընդդեմ թրաֆիքինգի» մշտադիտարկում ծրագիր**

ԾՐԱԳՐԻ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը «Աուդիո – Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի հետ համատեղ 2015 թվականի սեպտեմբերի տասնհինգից հոկտեմբերի տասնհինգը իրականացրել են ՀՀ 2015թ.-ի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի, «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի մշտադիտարկման ծրագիրը:

Ծրագրի նկարագրություն

ՀՀ Սպորտի և երիտասարդության հետ հարցերի նախարարությունը 2015թ.-ին իրականացրել է «Հայաստանի Հանրապետության 2015թ.-ի երիտասարդական մայրաքաղաք՝ Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի-«Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել Ստեփանավան քաղաքի, որպես ՀՀ 2015 թ.-ի երիտասարդական մայրաքաղաքի, երիտասարդների թրաֆիքինգի կանխարգելման իմացության մակարդակը՝ դասընթացների և ինտերակտիվ մրցակցային խաղերի միջոցով (Brain Ring-ի սկզբունքով):

Այս ծրագրի ավարտից հետո դրա արդյունավետության գնահատման համար անհրաժեշտություն կար անցկացնելու ծրագրի մշտադիտարկում, որն էլ հանդիսանում էր այս ծրագրի բուն նպատակը: Որպես մշտադիտարկման թիրախային խումբ հանդես են եկել ծրագրի մասնակիցները: Ծրագիրն անց է կացվել ք.Ստեփանավանում, տևողությունը՝ 1 ամիս: Որպես բուն միջոցառում՝ եղել են հանդիպումներ թիրախային խմբերի հետ, քննարկումներ, հարցաթերթիկների լրացում:

Ծրագրի նպատակը

Մարդկանց թրաֆիքինգի խնդիրը Հայաստանում գտնվում է կառավարության և հասարակական սեկտորի ուշադրության կենտրոնում, որի շնորհիվ վերջին երկու

տարիներին Հայաստանը ԱՄՆ Պետքարտուղարության Թրաֆիքինգի դեմ պայքարի տարեկան հաշվետվություններում տարածաշրջանում ներկայանում է որպես առաջին խմբի երկիր: Չնայած այս հաջողությունների, որում իր մեծ դերն ունի ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, դեռևս անելիքներ կան:

Եթե հանրապետության մեծ քաղաքներում բնակչության իրազեկվածության մակարդակը բավարար է, ապա նույն բանը չի կարելի ասել փոքր քաղաքների մասին: Հասարակությունը և հատկապես երիտասարդությունը դեռևս անհրաժեշտ մակարդակով տեղեկացված չէ թրաֆիքինգի հիմախնդիրներին և վտանգներին:

Ըստ 2013-2017 թվականների երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության 3-րդ գերակայության 34-րդ կետի թրաֆիքինգի դեմ պայքարը ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գերակա խնդիրներից է: 2015 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին Նախարարությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության 2015թ.-ի երիտասարդական մայրաքաղաք՝ Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի-Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագիրը: Ծրագրի իրականացման արդյունավետությունը պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել այդ ծրագրի մշտադիտարկումը:

Որպես «Հայաստանի Հանրապետության 2015թ.-ի երիտասարդական մայրաքաղաք՝ Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի-Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի մշտադիտարկում» ծրագրի թիրախ խումբ կրնտրվի՝ «Հայաստանի Հանրապետության 2015թ.-ի երիտասարդական մայրաքաղաք՝ Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի-Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի մասնակիցները: Քննարկումների և հարցաթերթիկների միջոցով կորոշվի նախարարության իրականացրած ծրագրի մասնակիցների ստացած գիտելիքների մակարդակը, որով և կգնահատվի այդ ծրագրի արդյունավետությունը:

Ծրագրի իրականացումը

Ծրագրի իրականացումը սկսվել է 2015թ.-ի սեպտեմբերի 15-ին, որն իրագործվել է հետևյալ փուլերով՝

- ծրագրի իրականացման մեթոդի մշակում - սեպտեմբերի 15-ից 18-ը,
- մշտադիտարկվող ծրագրի մասնակից պետական, հասարակական և առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում - սեպտեմբերի 18-ից 22-ը:
- ծրագրի մշտադիտարկման իրականացում – սեպտեմբերի 22-ից 23-ը:
- մշտադիտարկման արդյունքների մշակում, ամփոփում և հաշվետվության կազմում - սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 15-ը:

Մշտադիտարկումն իրականացվել է հետևյալ մեթոդաբանությամբ՝

- Փորձագիտական հարցազրույցներ երիտասարդական քաղաքականություն մշակողների հետ,

- Հիմնական թիրախ խմբի հետ հարցազրույցներ,
- Խմբային քննարկումներ երիտասարդների տարբեր խմբերի հետ
- Փաստաթղթերի վերլուծություն:

Իրականացվել են 10 փորձագիտական հարցազրույցներ, 20 հարցազրույցներ հիմնական թիրախ խմբի հետ, ավելի քան 20 խմբային քննարկումներ: Ընդհանուր առմամբ ստացվել է 107 հոգու արձագանք ու կարծիք մշտադիտարկվող ծրագրի արդյունավետության վերաբերյալ, որոնց հիման վրա մշակվել է մշտադիտարկման խնդիրների վերաբերյալ սույն վերլուծական հաշվետվությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե աշխատանքային, և թե սեռական թրաֆիքինգի հիմնական գոհերը հենց երիտասարդներն են, ինչպես նաև այն հանգամանքը, որ երիտասարդությունը դեռևս անհրաժեշտ մակարդակով տեղեկացված չէ թրաֆիքինգի հիմախնդիրներին և վտանգներին, ծրագիրն ամբողջությամբ արտացոլում է երիտասարդների կարիքներն ու հետաքրքրությունները:

Նախ բոլոր մասնակիցների համար կազմակերպվել է դասընթաց մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, Հայկական սփյուռքի և Ստեփանավանի պատմամշակութային արժեքներ թեմաներով, որոնց վերաբերյալ ներկայացումները տեղադրված էին նաև Թրաֆիքինգի խնդրի մասին միակ հայալեզու ինտերնետային կայքում (<http://www.antitrafficking.am>), որից հետո կազմակերպվել էր մրցակցային խաղ հարցերին արագ և ճիշտ պատասխանելու սկզբունքով:

Դասընթացին հրավիրված հանրապետության լավագույն փորձագետների կողմից նախ տրվել էին այն անհրաժեշտ տեղեկատվությունները, որոնք հետագայում օգնեցին խաղերի ժամանակ հարցերին ճիշտ պատասխանելու համար: Ինչպես նաև ցուցադրվել են ֆիլմեր և սոցիալական հոլովակներ նույն թեմաներով: Խաղերի անցկացման համար մշակվել էր նոր համակարգչային հատուկ ծրագիր, որը բացառում էր արտաքին միջամտությունները խաղի արդյունքների վրա:

Այնուհետև մասնակիցները բաժանվեցին 7 թիմերի, յուրաքանչյուրում՝ 5 խաղացող, որոնց միջև էլ անց կացվեց մրցակցային խաղը: Խաղի արդյունքում որոշվեց 3 հաղթող թիմ: Խաղն անց կացվեց Ստեփանավանի Անդրանիկ Մարգարյանի անվանի մշակույթի տանը:

Խաղերի հարցաշարը կազմված էր մարդկանց թրաֆիքինգի, հայկական սփյուռքի, ինչպես նաև Ստեփանավանի պատմամշակութային թեմաներից:

Դասընթացը և խաղը բաց էր և ցանկացողները կարող էին մասնակցել: Դասընթացին և խաղին հրավիրված էին տեղական ՁԼՄ-ների ներկայացուցիչներ, որոնք լուսաբանեցին միջոցառումը:

Մշտադիտարկման ենթակա ծրագիրն իրականացվել է ոչ ֆորմալ ուսուցման գործիքների կիրարկմամբ, որով և նպաստել է ծրագրի մասնակիցների ոչ ֆորմալ կրթությանը, ինչպես նաև անհատական զարգացմանը: Ծրագրի իրականացման բոլոր փուլերին մասնակցել են բացառապես 16-30 տարեկան երիտասարդներ:


Այս ծրագրի մեթոդաբանության հիմքում դրված էր հարցումների և անալիզի միջոցով պարզելը, թե որքանով է Ստեփանավանի երիտասարդությունը ծրագրերի

իրականացումից հետո իրագել թրաֆիքինգի հիմնախնդիրներին: Ինչպես նաև հիմնական խնդիրներից էր գնահատել ծրագրի արդյունավետությունը և վեր հանել բացթողումները: Մշտադիտարկումն իրականացվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբակային հարցումների միջոցով:

Ծրագրի արդյունքները


«Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» ծրագրի արդյունավետությունը կարելի է համարել բարձր՝ հիմնվելով ստորև ներկայացված հիմնական արդյունքների վրա.

- Դասընթացի մասնակիցների 66%-ը կամ 71 հոգի դասընթացի ավարտին իր գիտելիքների մակարդակը թրաֆիքինգի թեմայով գնահատել է լավ կամ գերազանց (տես Գրաֆիկ 1-ը):




Գրաֆիկ 1: Հարցում մասնակիցների շրջանում

- Մասնակիցների 92%-ը նշել է, որ դասընթացի և խաղի ավարտին իր գիտելիքները բավարար են թրաֆիքինգից խուսափելու համար (տես Գրաֆիկ 2-ը):



Գրաֆիկ 2: Հարցում մասնակիցների շրջանում


- Մասնակիցների 71,8%-ը մինչև դասընթացը տեղյակ էին մարդկանց միգրացիայի և թրաֆիքինգի հիմնախնդիրներին, սակայն նրանցից 89,7% պնդում էր, որ դասընթացի ավարտին իրենց գիտելիքները մարդկանց թրաֆիքինգի մասին ավելացել են, ինչը նշանակում է, որ կազմակերպիչներին հաջողվել է կազմել դասընթացի այնպիսի ծրագիր, որը չի կրկնել մասնակիցների գիտելիքները, այլ տվել է հավելյալ տեղեկատվություն խնդրի և դրանից խուսափելու արդյունավետ ուղիների մասին համար (տես Գրաֆիկ 3-ը):



Գրաֆիկ 3: Հարցում մասնակիցների շրջանում

- Խաղին մասնակից բոլոր յոթը խմբերը ցուցաբերել են բավականին բարձր արդյունքներ՝ հավաքելով 40 հնարավորից 30-35 միավոր, ինչը վկայում է, որ մինչ խաղը տրամադրված նյութերը և դասընթացը եղել են բավականին ինֆորմատիվ, մատչելի և ընկալելի լսարանի կողմից:
- Խաղի անցկացման օրը 200-ից ավելի երկրպագուներ և հանդիսատես ներկա են եղել խաղին, ինչը հնարավորություն է տվել քաղաքի բնակչությանը ևս տեղեկացված լինել թրաֆիքինգի վտանգների մասին: Ներկա էին նաև Ստեփանավանի մշակույթի տան, քաղաքապետարանի մի խումբ աշխատակիցներ, կազմակերպիչներ, ինչպես նաև պարզապես հետաքրքրասեր մարդիկ, ինչն ապացուցում է այն հանգամանքը, որ կազմակերպիչները կարողացել են արդյունավետ կերպով ներկայացնել իրենց միջոցառումների կարևորությունն ու նշանակությունը համայնքի համար:

- Դասընթացը և խաղը մեծ հետաքրքրություն է առաջացրել Ստեփանավան քաղաքում և հարակից գյուղերում, ինչը վկայում է իրականացված ծրագրի վերաբերյալ լայնածավալ լուսաբանումը տեղական և հանրապետական ՁԼՄ-ների, ինտերնետային կայքերի և սոցիալական ցանցերի միջոցով:
- Դասընթացի և խաղի վերաբերյալ առանձին խորագիր և լուսաբանում է իրականացվել նաև Հայաստանում թրաֆիքինգի մասին նյութերի և տեղեկատվության հիմնական աղբյուր հանդիսացող www.antitrafficking.am կայքում¹, այդպիսով ապահովելով ծրագրի և դրա շրջանակներում ներառված նյութերի հասանելիությունը նաև այլ տարածաշրջաններում: Նշենք, որ համաձայն անկախ հետազոտության արդյունքների² այս կայքի միջին այցելությունների քանակն ամսական գերազանցում է 1000 այցելուն, որոնց գերակշիռ մասը՝ 61%-ը կազմում են 18-34 տարեկան օգտատերերը: Սա թույլ է տալիս պնդել, որ ծրագիրը արդյունավետ է եղել ոչ միայն կոնկրետ ընտրված լսարանի, այլ նաև նշված ռեսուրսից օգտվող այլ երիտասարդների համար:




Գրաֆիկ 4: Քաղվածք www.antitrafficking.am կայքի այցելությունների հաշվետվությունից

¹ <http://antitrafficking.am/stepanavan/>

² Տվյալները վերցված են Google Analytics ծրագրի կողմից տրամադրված հաշվետվություններից

- Դասընթացի մասնակիցները և հանդիսատեսը նշում էին, որ հաճելիորեն տպավորված են ՀՀ կառավարության, հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մեծ ծավալով, պրոֆեսիոնալ մոտեցմամբ և փորձագետների պատրաստվածության բարձր մակարդակով, ինչն իրենց մոտ պետական մասշտաբով պաշտպանվածության զգացողություն է ստեղծում:
- Մեծ թվով զինվորներ, ովքեր մասնակցեցին և՛ դասընթացին, և՛ խաղին նշում էին նման ծրագրեր իրականացման կարևորությունը նաև գործնական, խնդրելով փոխանցել իրենց սոցիալական հոլովակների սկավառակը և դասընթացի նյութերը:
- Մասնակիցների գրեթե 60%-ը նշել է, որ մինչ այս ծրագիրը երբևէ չի մասնակցել նման ձևաչափով խաղի և բացի գիտելիքներից և գործնական հմտություններից նրանք ստացել են դրական էմոցիաներ և ձեռք բերել նոր ծանոթություններ: Սա ևս փաստում է այն հանգամանքը, որ կազմակերպիչների կողմից ընտրված մեթոդները բավականին արդյունավետ են երիտասարդների կրթման և իրազեկվածության բարձրացման հարցերում (տես Գրաֆիկ 5):



Գրաֆիկ 5: Հարցում մասնակիցների շրջանում

- Դասընթացի և խաղի ընթացքում հրավիրված հեղինակավոր փորձագետների հետ հարցազրույցի ժամանակ վերջիններս նշել են հետևյալ կարևոր փաստերը՝

1. Բոլոր մասնակիցները խիստ հետաքրքրված էին խնդրով, որոշները նույնիսկ նշում էին իրենց ծանոթ իրավիճակներ, որոնք կարելի էր որակել որպես թրաֆիքինգ:
2. Կազմակերպիչների կողմից Ստեփանավան քաղաքի և հայտնի քաղաքացիների մասին տեղեկատվության ներառումը ծրագրում բավականին արդարացված քայլ էր, որովհետև այդպիսով թեթևացվում էր դասընթացի բուն թեմայի ծանրությունը, մյուս կողմից ավելի մեծ հետաքրքրություն առաջացնում էրիտասարդների մոտ իրենց քաղաքի հանդեպ:
3. Խաղի արդյունքները շատ բարձր էին, հատկապես առավել բարդ հարցերի ճիշտ պատասխաններով: Այս փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ երիտասարդները ոչ թե հպանցիկ լսել են խնդրի մասին, այլ մանրամասն ու համապարփակ տեղեկատվություն ստացել թրաֆիքինգի և միգրացիայի վերաբերյալ:
4. Մարզերում բնակվող երիտասարդները կարիք ու ցանկություն ունեն մասնակցելու նմանատիպ մասնագիտական դասընթացների, լսելու փորձառու իրավաբանների, պետական կառույցների աշխատակիցների, լրագրողների և այլ մասնագետների կարծիքը, քննարկելու իրենց շրջապատում առկա խնդիրները և ստանալու մասնագիտական խորհրդատվություն իրենց հուզող հարցերի շուրջ:

Դիտողություններ

Մի շարք մասնակիցներ այնուամենայնիվ առաջարկում էին, որպեսզի դասընթացի տեսական մասն ավելի ինտերակտիվ դառնա, ավելի շատ սոցիալական հոլովակներ ցուցադրվեն, ավելի շատ գործնական օրինակներ բերվեն և դասախոսության ֆորմատը ընդհանուր առմամբ ավելի մոտեցվի երկխոսությանը:

Մասնակիցներից մի քանիսը նշել են նաև, որ խաղի ընթացքում տեխնիկական խնդիրներ են եղել, որոնք իհարկե չեն ազդել ծրագրի արդյունավետության վրա, բայց որոնք ցանկալի է վերացնել:

Ամփոփում

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում անցկացված սեմինարի և խաղի արդյունավետությունը եղել է բավականին բարձր: Հիմնական եզրակացություններն են՝

- Այն երիտասարդները, ովքեր մասնակցել են դասընթացին և հատկապես խաղին, թե իրենց անձնական և թե փորձագետների կարծիքով ունեն բավարար գիտելիքներ՝ խուսափելու թրաֆիքինգից:
- Դասընթացի մասնակիցները և հանդիսատեսը խիստ տպավորված էին ստացված գիտելիքներով և շատերը նշում էին, որ կպատմեն խնդրի մասին իրենց հարազատներին և բարեկամներին, ինչն իր հերթին բարձրացնում է

իրազեկության մակարդակը, ուստի նաև իրականացված ծրագրի արդյունավետությունը ընտրված տարածաշրջանում:

- Բացի դասընթացի բուն մասնակիցներից, միջոցառմանը ներկա էին նաև պարզապես հետաքրքրված մարդիկ և աջակիցներ, ովքեր դիտելով խաղը ձեռք են բերել գիտելիքներ մարդկանց միգրացիայի և թրաֆիքինգի հիմնախնդիրների վերաբերյալ
- Ծրագրի մասին համապարփակ լուսաբանում է իրականացվել տեղական ԶԼՄ-ներով, ինտերնետային և հեռուստատեսային հարթակներով: Ծրագրի առանձին խորագիր հատկացվել էր նաև թրաֆիքինգի վերաբերյալ հիմնական ռեսուրս համարվող www.antitrafficking.am կայքում, որտեղ գետեղված են ծրագրին առնչվող բոլոր նյութերը:
- Ընդհանուր առմամբ ծրագրի իրակացման ընթացքում հաջողվել է ապահովել այն մթնոլորտը, որ Ստեփանավան քաղաքում շատ կարևոր ծրագիր է իրականացվում ու պետությունը, մասնավորապես Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը մտահոգ է քաղաքացիների անվտանգության և իրազեկվածության հարցերով:

Առաջարկություններ

Ամփոփելով ծրագրի իրականացման ընթացքում ստացված արդյունքները և հաշվի առնելով արդյունավետության բարձր մակարդակը՝ առաջարկում ենք.

- Շարունակել թրաֆիքինգ երևույթի մասին իրազեկումը ՀՀ բոլոր մարզերում, հատկապես այն քաղաքներում, որտեղ երիտասարդներն առավել խոցելի են մարդկանց միգրացիայի և թրաֆիքինգի համատեքստում:
- Շարունակել ցուցադրել մարդկանց թրաֆիքինգի թեմայով թողարկված սոցիալական գովազդները մարզային հեռուստաընկերություններով՝ պահպանելով իրազեկվածության ձեռք բերված մակարդակը:
- Ներգրավել ավելի մեծ թվով երիտասարդներ՝ հատկապես ինտերակտիվ ֆորմատի դասընթացներում, որովհետև հարցման արդյունքներով խաղի մասնակիցները ավելի իրազեկ են, քան պարզապես հանդիսատեսը:
- Դասընթացներում ներգրավել ավելի մեծ թվով փորձագետներ, ովքեր գործնականում առնչվել են խնդրի հետ և կարող են իրական պատմությունների հիման վրա ներկայացնել թեման, այդպիսով ավելի առարկայական դարձնելով թրաֆիքինգ երևույթի առկայությունը և վտանգները Հայաստանում:

Ծրագրի ղեկավար,

«Աուդիո – վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի տնօրեն՝

Արզուման Հարությունյան